ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ОФИС ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ БЮЛЛЕТЕНЬ

№ 11/2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
զետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2026 թվականի նոյեմբերի 16-ից

Երևան ■ 2026 ■ Ереван

● ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐ 4, 303

Տեղեկություններ տրված կարճաժամկետ արտոնագրերի մասին 6, 305

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆՆԵՐ 10, 308

Տեղեկություններ տրված արդյունաբերական դիզայնների արտոնագրերի մասին 13, 310

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ 17

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին 19

Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին 295

ՑՈՒՑԻՉՆԵՐ 297

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ 299

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 301

ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ 311

Հրատարակվում է Մտավոր սեփականության գրասենյակի կողմից 1995թ.

0010 Երևան, Մ. Մկրտչյան 5/1
Հեռ. (011) 597-534 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական տեխնոլոգիաների ապահովման և հրապարակումների բաժին

Издается Офисом интеллектуальной собственности с 1995г.

Ереван 0010, ул. Мгера Мкртчяна 5/1
Тел. (374 11) 597-534 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-технологического обеспечения и публикаций

Internet: www.aipo.am
E-mail: armpat@aipa.am

●СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ..... 4, 303

Сведения о выданных краткосрочных патентах..... 6, 305

ПРОМЫШЛЕННЫЕ ДИЗАЙНЫ.....10, 308

Сведения о выданных патентах на промышленные дизайны..... 12, 310

ТОВАРНЫЕ ЗНАКИ..... 17

Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания.....19

Сведения о продлении действия регистрации товарных знаков.....295

УКАЗАТЕЛИ..... 297

ДОГОВОРА..... 299

СООБЩЕНИЯ..... 301

ДВУБУКВЕННЫЕ КОДЫ..... 311

●CONTENTS

INVENTIONS..... 4, 303

Information on granted short-term patents..... 6, 305

INDUSTRIAL DESIGNS.....10, 308

Information on granted industrial designs patents.....12, 310

TRADE MARKS..... 17

Information on registered trade marks and service marks..... 19

Information on renewal of trademark registration..... 295

INDEXES..... 297

AGREEMENTS..... 299

REPORTS..... 301

TWO-LETTER CODES..... 311

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
A գյուտի արտոնագիր ստանալու հրապարակված հայտ
Y գյուտի կարճաժամկետ արտոնագիր
B գյուտի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 ցուցահանդեսային առաջնության թվականը
31 առաջին հայտի համարը
32 առաջին հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45 գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվական
51 միջազգային արտոնագրային դաս ակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54 գյուտի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71 հայտատու (ները), հասցեն, երկրի կոդը
72 գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված կարճաժամկետ արտոնագրերի մասին

(51) 2026.01 (11) 1078 (13) Y
A01N 3/00
(21) AM20260066Y (22) 11.06.2026
(72) Ռուբեն Դիլանյան (AM)
(73) Ռուբեն Դիլանյան (AM)

(54) Կտրված ծաղիկների պահպանման եղանակ, դրա իրականացման համար ջրային կենսաքայքայվող լուծույթ և հեղուկացրի հավաքածու

(57) 1. Կտրված ծաղիկների պահպանման եղանակ, ըստ որի կտրված ծաղիկների արտաքին մակերևույթը հեղուկացրի միջոցով 20-ից մինչև 120 մկմ չափամասի կաթիլներով պատում են ջրային կենսաքայքայվող լուծույթով, կենսաքայքայվող լուծույթը ε-պոլիլիզինի, գամմա-ամինակարագաթթվի, կալցիումի աղի, ֆլավինային բաղադրիչի, կենսաքայքայվող թաղանթագոյացնող բաղադրիչի, սննդային կոնսերվանտի, թթվայնության կարգավորիչի և ջրի խառնուրդ է, ընդ որում ջրային կենսաքայքայվող լուծույթի pH=4,3-5,7 արժեքների միջակայքում է, իսկ լուծույթում չոր նյութի մնացորդը կազմում է 0,1-2,0 զանգվ. %:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ ջրային կենսաքայքայվող լուծույթով պատում են կտրված ծաղկի պսակաթերթիկները, կոկոնները, բաժակաթերթիկները և/կամ տերևները:

3. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ պատումն իրականացնում են «չոր մառախուղի» առաջացման հնարավորությամբ:

4. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ ջրային կենսաքայքայվող լուծույթի pH-ը գերադասելիորեն 4,7-ից 5,2 է:

5. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ լուծույթում չոր մնացորդը գերադասելիորեն կազմում է 0,2-0,7 զանգվ. %:

6. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ հեղուկացրի միջոցով պատումն իրականացնում են 20,0-50,0 սմ հեռավորությունից, գերադասելիորեն՝ 30,0-40,0 սմ:

7. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ ջրային կենսաքայքայվող լուծույթի ծավալը 0,05-0,5 մլ է՝ մեկ ծաղկի հաշվարկով:

8. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ որպես կենսաքայքայվող թաղանթագոյացնող բաղադրիչ վերցնում են պուլուլան և հիդրոքսիէթիլցելյուլոզ:

9. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ որպես սննդային կոնսերվանտ վերցնում են կալիումի սորբատ և նատրիումի բենզոատ:

10. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ որպես ֆլավինային բաղադրիչ վերցնում են ռիբոֆլավին:

11. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ որպես թթվայնության կարգավորիչ վերցնում են կիտրոնաթթու, կաթնաթթու, խնձորաթթու կամ դրանց աղերը:

12. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ ջրային կենսաքայքայվող լուծույթով պատումն իրականացնում են մեկ կամ կրկնակի անգամ՝ 24-48 ժամ ընդմիջումներով:

13. Կտրված ծաղիկների արտաքին մակերևույթը հեղուկացրի միջոցով պատման ջրային կենսաքայքայվող լուծույթ. *տարբերվում է նրանով,* որ ներառում է ε-պոլիլիզինի, գամմա-ամինակարագաթթվի, կալցիումի լակտատի, ֆլավինային բաղադրիչի, պուլուլանի, հիդրոքսիէթիլցելյուլոզի, կալիումի սորբատի, նատրիումի բենզոատի, թթվայնության կարգավորիչի և ջրի խառնուրդ՝ բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

ε-պոլիլիզին	0,001-0,20
գամմա-ամինակարագաթթու	0,001-0,30
կալցիումի լակտատ	0,02-0,50
ֆլավինային բաղադրիչ	0,00005-0,02
պուլուլան	0,01-0,30
հիդրոքսիէթիլցելյուլոզ	0,002-0,08
կալիումի սորբատ	0,01-0,20
նատրիումի բենզոատ	0,01-0,20
թթվայնության կարգավորիչ	մինչև pH=4,3-5,7
ջուր	մնացածը:

14. Լուծույթն ըստ 13-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ բաղադրամասերը վերցված են գերադասելիորեն հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ. %.

ε-պոլիլիզին	0,01-0,08
գամմա-ամինակարագաթթու	0,02-0,10
կալցիումի լակտատ	0,05-0,20
ֆլավինային բաղադրիչ	0,0005-0,005
պուլուլան	0,02-0,15
հիդրոքսիէթիլցելյուլոզ	0,005-0,03
կալիումի սորբատ	0,03-0,12
նատրիումի բենզոատ	0,03-0,12
թթվայնության կարգավորիչ	մինչև pH=4,3-5,7
ջուր	մնացածը:

15. Լուծույթն ըստ 13-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ ջրային կենսաքայքայվող լուծույթի pH-ի արժեքը գերադասելիորեն pH=4,7-5,2 է:

16. Լուծույթն ըստ 13-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ նրանում չոր նյութի մնացորդը գերադասելիորեն կազմում է 0,2-0,7 զանգվ. %:

17. Կտրված ծաղիկների արտաքին մակերևույթը պատող հեղուկացրի հավաքածու, որն ունի 13-16-րդ կետերից ցանկացածի համաձայն ջրային կենսաքայքայվող լուծույթի տարա և մեխանիկական հեղուկացիր, ընդ որում տարան կատարված է լուսապաշտպան նյութից կամ լուսապաշտպան ծածկույթով է և այն սրվակի տեսքով է:

18. Հավաքածուն ըստ 17-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ լրացուցիչ ներառում է կիրառման հրահանգ, որը փակցված է տարային կամ տեղադրված է տուփի մեջ, որում լուծույթը պատում են 20-50 սմ հեռավորությունից՝ 0,05-0,5 մլ քանակությամբ մեկ ծաղկի համար՝ 24-48 ժամը մեկ անգամ մշակման պարբերականությամբ:

(74) Արեգ Պետրոսյան

---

(51) 2026.01 (11) 1079 (13) Y
A61M 5/00
(21) AM20260081Y (22) 20.07.2026

(72) Գևորգ Խորենի Ստեփանյան (AM)
(73) Գևորգ Խորենի Ստեփանյան (AM)

(54) Խառնիչ-բաժնավորող սարք (տարբերակներ)

(57) 1. Խառնիչ-բաժնավորող սարք, որն ունի խոռոչով իրան, խոռոչը երկու խցիկների բաժանող բաժանիչ տարր, յուրաքանչյուր խցիկում առանձին տեղակայված բաղադրիչ, մխոց և ելքային անցուղի, անցուղին կատարված է հանովի գլխադիրի միակցման հնարավորությամբ, ընդ որում բաժանիչ տարրը կատարված է մխոցի ստեղծած ճնշման ազդեցությամբ խցիկների միջև հաղորդակցության և խառնված բաղադրության երկկողմանի փոխադարձ հոսքի ապահովմամբ, իսկ մխոցի հետ փոխազդեցությունից հետո՝ երկայնական առանցքի ուղղությամբ տեղաշարժվելու հնարավորությամբ:

2. Սարքն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ բաժանիչ տարրի միջնամասում տեղակայված է քայքայվող թաղանթ:

3. Սարքն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ հանովի գլխադիրը կատարված է ներարկման ասեղի, կանյուլի, բաժնավորող ծայրոցի, գդալի, ապլիկատորի, կաթետերի, փոշարարի կամ խառնիչ ծայրոցի տեսքով:

4. Սարքն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ հանովի գլխադիրը միակցվում է պարուրակային, կոնաձև կամ բայոնետային միակցման միջոցով:

5. Խառնիչ-բաժնավորող սարք, որն ունի իրան, իրանում իրար զուգահեռ տեղակայված երկու խցիկ, յուրաքանչյուր խցիկում տեղակայված առանձին բաղադրիչ և մխոց, խցիկների միջև տեղակայված բաժանիչ տարր և ելքային անցուղի, անցուղին կատարված է հանովի գլխադիրի միակցման հնարավորությամբ, ընդ որում բաժանիչ տարրը կատարված է մխոցների ստեղծած ճնշման ազդեցությամբ խցիկների միջև հաղորդակցության և խառնված բաղադրության երկկողմանի փոխադարձ հոսքի ապահովման հնարավորությամբ:

6. Սարքն ըստ 5-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ բաժանիչ տարրն ունի բացվող անցումային ուղիներ:

7. Սարքն ըստ 5-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ խցիկներն ունեն գլանաձև, օվալաձև, ուղղանկյուն կամ քառակուսի ձև:

8. Սարքն ըստ 5-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ ելքային անցուղին տեղակայված է երկու խցիկների միջև:

9. Սարքն ըստ 5-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ ելքային անցուղին տեղակայված է խցիկներից մեկի կողմից:

10. Սարքն ըստ 5-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ մխոցները կատարված են միակցիչ տարրով իրար միակցվելու հնարավորությամբ:

11. Սարքն ըստ 5-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ հանովի գլխադիրը կատարված է ներարկման ասեղի, կանյուլի, բաժնավորող ծայրոցի, գդալի, ապլիկատորի, կաթետերի, փոշարարի կամ խառնիչ ծայրոցի տեսքով:

12. Սարքն ըստ 5-րդ կետի. *տարբերվում է նրանով,* որ հանովի գլխադիրը միակցվում է պարուրակային, կոնաձև կամ բայոնետային միակցման միջոցով:

(74) Ավետիս Պերյան

---

(51) 2026.01 (11) 1080 (13) Y
C07D 233/00
(21) AM20250087Y (22) 12.11.2025
(72) Լիլիթ Բիչախչյան (AM), Աստղիկ Սուքոյան (AM), Տաթևիկ Մովսիսյան (AM), Նաղարշ Միրաքյան (AM), Մարիա Պետրոսյան (AM), Ռոբերտ Հակոբյան (AM), Հովհաննես Աթթարյան (AM)
(73) «ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ, 0014, Երևան, Ազատության 26 (AM)
(54) 1-(2-քլորէթիլ)-4-նիտրոիմիդազոլի ստացման եղանակ
(57) 1. 1-(2-քլորէթիլ)-4-նիտրոիմիդազոլի ստացման եղանակ, ըստ որի 4-նիտրոիմիդազոլը լուծում են ջրում, ստացված լուծույթին ավելացնում են կալիումի հիդրօքսիդ և կատալիզատոր, խառնում են, ապա ավելացնում են 1,2-դիքլորէթան, խառնում են, ստացված խառնուրդը տաքացնում են 70–75°C ջերմաստիճան՝ 5 ժամ տևողությամբ, այնուհետև ենթարկում են էքստրակցիայի և բյուրեղացնում:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ 4-նիտրոիմիդազոլը, ջուրը, կալիումի հիդրօքսիդը, կատալիզատորը և 1,2-դիքլորէթանը վերցնում են 1:1:0,56:0,02:10 զանգվածային հարաբերակցությամբ:

3. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ որպես կատալիզատոր վերցնում են տրիէթիլբենզիլամոնիումի քլորիդ:

---

(51) 2026.01 (11) 1081 (13) Y
F16C 17/00
(21) AM20250096Y (22) 05.12.2025
(72) Արտյոմ Լավրենտի Շեկյան (AM)
(73) Արտյոմ Լավրենտի Շեկյան, 0031, Երևան, Լենինգրադյան 48/4, բն. 8 (AM)
(54) Սահքի առանցքակալ
(57) 1. Սահքի առանցքակալ, որն ունի անշարժ իրան, իրանի մեջ տեղակայված լիսեռի վզիկով ներդրակ, ընդ որում ներդրակը կատարված է էլիպսի հիմք ունեցող սնամեջ գլանի տեսքով:

2. Առանցքակալն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ ներդրակի ներքին աշխատանքային մակերևույթը պատված է յուղով:

---

(51) 2026.01 (11) 1082 (13) Y
H01L 29/00
(21) AM20260052Y (22) 21.04.2026
(72) Արիգա Առաքելյան (AM), Ռուբեն Հովսեփյան (AM), Սիլվա Պետրոսյան (AM), Հրաչյա Մնացականյան (AM), Գեորգի Բադալյան (AM)
(73) «ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ (AM)
(54) Բարակթաղանթային դաշտային տրանզիստորի հիման վրա էներգաանկախ հիշողության տարր և այդ տարրի կառավարման եղանակ
(57) 1. Բարակթաղանթային դաշտային տրանզիստորի հիման վրա էներգաանկախ հիշողության տարր, որը ներառում է տակդիր, դրա մակերևույթին տեղակայված ակունքի և հոսարանի էլեկտրոդներ, այդ էլեկտրոդների միջև տեղադրված կիսահաղորդչային անցուղի, անցուղու վերևում տեղադրված փականի դիէլեկտրական շերտ՝ կատարված ոչ սեգնետոէլեկտրական նյութից և դրա վրա ձևավորված փականի էլեկտրոդ, որում կիսահաղորդչային անցուղին կատարված է լիթիումով լեգիրված ցինկի օքսիդի հիման վրա սեգնետոէլեկտրական կիսահաղորդչից, որն օժտված է ինքնաբեր բևեռացմամբ, ընդ որում կիսահաղորդչային անցուղու հաստությունն ընտրված է նշված սեգնետոէլեկտրական կիսահաղորդչի ինքնաբեր բևեռացման էկրանավորման խորությանը համաչափ:

2. Սարքն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ տակդիրը կատարված է (001) կողմնորոշմամբ շափյուղայից:

3. Սարքն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ ակունքի և հոսարանի էլեկտրոդները կատարված են գալիումով լեգիրված ցինկի օքսիդի բարձրհաղորդիչ թաղանթից:

4. Սարքն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով,* որ փականի դիէլեկտրական շերտը կատարված է մագնեզիումի ֆտորիդի թաղանթից:

5. Ըստ 1-ին կետի էներգաանկախ հիշողության տարրի կառավարման եղանակ, ըստ որի տրանզիստորի էլեկտրոդներին հաղորդում են լարումներ՝ տեղեկատվության գրանցման և ընթերցման համար, որում տրամաբանական վիճակների՝ «0» կամ «1» գրանցումն իրականացնում են փականի էլեկտրոդին այնպիսի լարման իմպուլսի կիրառմամբ, որի մեծությունը գերազանցում է անցուղու սեգնետոէլեկտրական կիսահաղորդչի կոէրցիտիվ դաշտը՝ փականից դեպի տակդիր կամ տակդիրից դեպի փական ուղղությամբ նրա ինքնաբեր բևեռացման վեկտորի վերակողմնորոշումն ապահովելու համար, ընդ որում, տեղեկատվության ընթերցումը կատարում են հոսարանի հոսանքի չափմամբ, որի մեծությունը մոդուլացվում է անցուղու փոխարկված ինքնաբեր բևեռացման ներքին դաշտով:

(74) Արեգ Պետրոսյան

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԵՐ

Արդյունաբերական դիզայններին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
S արդյունաբերական դիզայնի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 ցուցահանդեսային առաջնության թվականը
24 գրանցման թվականը
31 առաջին հայտի համարը
32 առաջին հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
51 արդյունաբերական դիզայնների միջազգային դասակարգման (ԱԴՄԴ) ցուցիչը (ները)
54 արդյունաբերական դիզայնի անվանումը
55 արդյունաբերական դիզայնի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
72 հեղինակը(ները), երկրի կոդը
73 արտոնագրատեր(երը), հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ տրված արդյունաբերական դիզայնների արտոնագրերի մասին

(51) 01-01 (11) 706 (13) S
(21) 20260018 (22) 26.05.2026
(71) Իրինա Էդուարդի Մարկոսյան (AM)
(72) Իրինա Էդուարդի Մարկոսյան (AM)
(74) Մ. Դավթյան
(54) Շոկոլադ
(55)



1.1



1.2



1.3



1.4



1.5



1.6



1.7

(51) 12-05 (11) 707 (13) S
(21) 20260005 (22) 19.02.2026
(71) Աշոտ Մարտինի Քառյան (AM)
(72) Աշոտ Մարտինի Քառյան (AM)
(74) Լ. Ակոպովա
(54) Ուղղաձիգ ավտոկայանատեղ
(55)



1.1



1.2



1.3



1.4



1.5



1.6



1.7



1.8

(51) 19-08 (11) 708 (13) S
(21) 20260016 (22) 13.05.2026
(71) «Մարտին սթար» ՍՊԸ, 0088, Երևան, Աշտարակի խճուղի 9/1 (AM)
(72) Գարեգին Ռևազյան (AM)
(54) Արևածաղկի սերմերի պիտակ (2 տարբերակ)
(55)



1.1



2.1

---

(51) 11-01 (11) 709 (13) S
(21) 20260022 (22) 08.06.2026
(71) Գրիգորի Ահարոնի Խաչատրյան (AM)
(72) Գրիգորի Ահարոնի Խաչատրյան (AM)
(74) Ա. Գալոյան
(54) Օբսիդիանից ապարանջան՝ համակցված սիգարի աքսեսուարներով (2 տարբերակ)
(55)



1.1



1.2



1.3



1.4



2.1



2.3



2.2



2.4

Տեղեկություններ արդյունաբերական դիզայնների գրանցման գործողության երկարաձգման մասին

(11) Արտոնագրի համարը	Երկարաձգված ժամկետը	(73) Արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
169	08.11.2031	«Սոնի Քմփյութր Էնթըթեյնմենթ Ինք.», JP
577	21.10.2031	«Լիի դելյուքս» ՍՊԸ, ՀՀ, Երևան 0023, Կենտրոն, Գետառի փ./4, AM

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

Ապրանքային և սպասարկման նշաններին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի

111	*գրանցման հերթական համարը*
151	*գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)*
152	*թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է*
181	*գրանցման գործողության ենթադրյալ ավարտը*
210	*հայտի համարը*
220	*հայտի ներկայացման թվականը*
230	*ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը*
310	*առաջին հայտի համարը*
320	*կոնվենցիայով առաջնության թվականը*
330	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
442	*հայտի հրապարակման թվականը*
511	*ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը*
526	*չպահպանվող տարրեր*
540	*ապրանքային նշանը*
551	*կոլեկտիվ կամ հավաստագրային նշան*
554	*ծավալային նշան*
555	*հոլոգրաֆիական նշան*
556	*ձայնային նշան*
591	*գույնը և գունային համակցությունը*
646	*իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը*
730	*նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը*
740	*արտոնագրային հավատարմատար*

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20250441 **(111) 46280**
(220) 10.02.2025 **(151) 13.11.2026**
(181) 10.02.2035

(730) Անհատ Ձեռնարկատեր Վիկտոր Վասիլյև Ալեքսանդրի, Երևան 0086, Արտաշեսյան 3-րդ նրբ., շ. 1, բն. 7, ՀՀ

(442) 03.03.2025

(540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է կարմիր և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 1. փոխհաղորդակային հեղուկ. փոխհաղորդիչ յուղեր.

դաս 6. ականոցներ (երկաթեղեն իրեր), այդ թվում՝ ավտոմատ շարժահաղորդակների համար. մետաղական պնդացնող օղակներ.

դաս 7. մեքենաների շարժահաղորդակներ, այդ թվում՝ ավտոմատ կառավարվող. զտիչներ՝ որպես մեքենաների կամ շարժիչների մասեր, այդ թվում՝ ավտոմատ շարժահաղորդակների համար. ռադիատորներ, այդ թվում՝ ավտոմատ շարժահաղորդակների համար.

դաս 12. փոխանցման մեխանիզմներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար, այդ թվում՝ ավտոմատ շարժահաղորդակների համար. շփական սկավառակներ, այդ թվում՝ ավտոմատ շարժահաղորդակների համար.

դաս 17. միջադիրներ, այդ թվում՝ ավտոմատ շարժահաղորդակների համար. օղաձև միջադիրներ ռետինից կամ ռետինացված (վուլկանացված) թելքից.

դաս 35. հայտի՝ 1-ին, 6-րդ, 7-րդ, 12-րդ, 17-րդ դասերում նշված ապրանքների ներմուծում, արտահանում, մանրածախ և մեծածախ վաճառք:

(740) Լիլիթ Ակոպովա

---

(210) 20250981 **(111) 46281**
(220) 25.03.2025 **(151) 13.11.2026**
(181) 25.03.2035

(730) «Ստեփ շին 1» ՍՊԸ, Երևան, Ավան համայնք, Իսահակյան շ. 1/2, բն. 55, ՀՀ

(442) 16.04.2025

(540)



(526) «GROUP» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)

դաս 42. ինտերիեր դիզայն. էքստերիեր դիզայն:

---

(210) 20251393 **(111) 46282**
(220) 30.04.2025 **(151) 13.11.2026**
(181) 30.04.2035

(730) «Տոսպ քոնսթրաքթ» ՍՊԸ, Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Տիչինայի փ. 29/2, ՀՀ

(442) 16.05.2025

(540)



(526) «EST 1947» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է բորդո, մանուշակագույն, բեժ, սպիտակ և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 1. օքսիդարարներ (քիմիական հավելանյութեր շարժիչային վառելիքի համար). սոսնձող նյութեր արդյունաբերական նպատակների համար. աղեր պահածոյացման համար, բացառությամբ սննդի պատրաստման համար օգտագործվողների. օժանդակ հեղուկներ հղկանյութերի հետ օգտագործելու համար. ռետինացման (վուլկանացման) ուժեղարարներ. հակափրփրային լուծույթներ էլեկտրական կուտակիչների համար. ացետատներ (քիմիական նյութեր). ցելյուլոզի ացետատ, չմշակված. մանրէաբանական պատրաստուկներ թթվեցնելու համար. քացախաթթվի անհիդրիդ. ացետոն. ացետիլեն. քառաքլորէթան. թթուներ. քիմիական պատրաստուկներ կոնդենսացման համար. քիմիական թթվակայուն բաղադրություններ. պատրաստուկներ պողպատի մաքրամշակման համար. ակտինիում. քիմիական հավելանյութեր հորատման լուծույթների համար. քիմիական հավելանյութեր մոտորային վառելիքի համար. մաքրող հավելանյութեր բենզինի համար. կպչուն բաղադրություններ վիրաբուժական վիրակապման նյութերի համար. նյութեր ջուրը փափկացնելու համար. տրագանտ (տրագականտ) արդյունաբերական նպատակների համար. ակտիվացրած ածուխ. մղող գազեր աերոզոլների համար. լուսանկարչական թուլացուցիչներ. սոսինձներ հայտարարությունները փակցնելու համար. ագար-ագար արդյունաբերական նպատակների համար. կցող նյութեր բետոնի համար. քիմիկատներ գյուղատնտեսության համար, բացառությամբ ֆունգիցիդների, հերբիցիդների, միջատասպանների և մակաբուծասպանների. բաղադրություններ դողերի օդախցիկները նորոգելու համար. սպիտակուցներ (կենդանական կամ բուսական, հումք). յոդային սպիտակուցներ. ածիկային սպիտակուցներ. ալբումինային թուղթ. ալկալիներ. կծու ալկալիներ. հողալկալիական մետաղներ. սպիրտներ. էթիլային սպիրտ. ալդեհիդներ. ծովային ջրիմուռներ (պարարտանյութեր). քիմիական նյութեր սննդամթերքը պահածոյացնելու համար. քիմիական պատրաստուկներ մետաղների լեգիրումը հեշտացնելու համար. արզնահող. ալյումինային շիբ. ալյումինի հիդրատ. ալյումինի սիլիկատներ. ալյումինի քլորիդներ. ալյումինի յոդիդ. շիբ (պաղլեղ). քիմիկատներ հողը պարարտացնելու համար. ամերիցիում. օսլա արդյունաբերական նպատակների համար. քիմիական նյութեր օսլան նոսրացնելու համար (սոսնձազերծող). անուշադր. աղաթթու. ամոնիակային աղեր. ամոնիակ. ալդեհիդամոնիակ. ալյումինա-ամոնիումային շիբ. ամիլացետատ. ամիլային սպիրտ. հեղուկ անջուր ամոնիակ. անհիդրիդներ. փայտածուխ. կենդանական սպիտակուցներ (հումք). անտրանիլային թթու. ներքին այրման շարժիչների վառելիքների հակաճայթիչներ. անտիֆրիզներ (հակասառիչներ). հակադիրտեր. ծարիր. ծարիրի օքսիդ. ծարիրի սուլֆիտ. ապրետուրներ մանածագործվածքի համար. սենեգալյան բուսախեժ արդյունաբերական նպատակների համար. կպչուն բաղադրություններ ծառերը պատվաստելու համար. մածիկներ ծառերի ճեղքերի համար (անտառային տնտեսություն). արծաթի աղերի լուծույթներ արծաթապատման համար. արգոն. կապարի արսենատ. մկնդեղ. արսենային թթուներ. աստատին. վառելիք միջուկային ռեակտորների համար. քիմիական պատրաստուկներ շարժիչներում այրուքը հեռացնելու համար. ինքնագունավորվող լուսանկարչական թուղթ. լուսարարներ տեքստիլ արտադրանքի համար. ազոտ. ազոտի օքսիդ. ազոտական պարարտանյութեր. ազոտական թթու. էնոլոգիական մանրէասպաններ (գինու արտադրության ժամանակ օգտագործվող քիմիական պատրաստուկներ). պատրաստուկներ սևեռակման համար (լուսանկարչություն). լուծույթներ ցինկապատման համար, լուծույթներ գալվանապատման համար. երանգավորող լուծույթներ (լուսանկարչություն). նատրիումի կարբոնատ. բարիում. բարիումի օքսիդ. բարիտային թուղթ. բարիումի միացություններ. նյութեր գուլպաների հատերը գնալը կանխելու համար. հիմքեր (քիմիական նյութեր). քիմիկատներ արծնի արտադրության համար, բացառությամբ ներկերի պիգմենտների. բորսիտներ. բենտոնիտ. բենզոլային շարքի թթուներ. բենզոլի ածանցյալներ. բենզոյական թթու (բենզոյաթթու). օրթոբենզոյական թթվի սուլֆիմիդ. սախարին արդյունաբերական նպատակների համար. բերկելիում. նյութեր բետոնը փրփրեցնելու համար. պահպանող միջոցներ բետոնի համար, բացառությամբ ներկերի և յուղերի. անագի երկքլորիդ. կալիումի երկքրո-

մատ. նատրիումի երկքրոմատ. լուսարարներ և կոնսերվանտներ գարեջրի համար. կենսաբանական կատալիզատորներ. կալիումի երկօքսալատ. մանգանի երկօքսիդ. բիսմութ. բիսմութի հիմնային գալատ. խոնավացնող պատրաստուկներ սպիտակեցնելիս օգտագործելու համար. գունազերծիչներ մոմերի համար. դաբաղային փայտանյութ. փայտասպիրտ. փայտազանգված. փայտաքացախ (փայտահեղուկ). բորակ. բորական թթու արդյունաբերական նպատակների համար. լուծույթներ հորատման համար. կարծր զոդանյութեր. քիմիկատներ կոնդենսացումը կանխելու համար. կատեխու (դաբաղման էքստրակտ). կաինիտ. կալցիումի ցիանամիդ (ազոտական պարարտանյութեր). կալիֆոռնիում. պլաստիկարարներ. պաշտպանիչ նյութեր կաուչուկի համար. կարբոնատներ. մագնեզիումի կարբոնատ. ածխածին. ծծմբածխածին. ածխաթթու. կարբիդներ. կալցիումի կարբիդ. կասիոպիում (լյուտեցիում). կատալիզատորներ. ցելյուլոզ (թաղանթանյութ). թղթազանգված. վիսկոզ. ածխածնավորիչներ (մետալուրգիա). ֆերմիում. ջնարակներ խեցեղենի համար. ցերիում. հազվագյուտ հողերի մետաղների աղեր. ցեզիում. կետոններ. պատրաստուկներ կենդանական ածխածնից. ակտիվացրած ածուխ զտիչների համար. կենդանական ոսկրից ածխածին. արյան ածխածին. պատրաստուկներ, որոնք ապահովում են ածխի խնայողական օգտագործումը. սոսնձող միջոցներ կոշկեղենի համար. կալցիումի ացետատ կալցիումի կարբոնատ. քլորակիր. քիմիկատներ ծխնելույզները, բուխարիները մաքրելու համար. քիմիկատներ կաշին նորացնելու համար. արդյունաբերական քիմիկատներ. քիմիական պատրաստուկներ գիտական նպատակների համար, բացառությամբ բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողների. քիմիական ռեակտիվներ, բացի բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողներից. դանդաղարարներ միջուկային ռեակտորների համար. քիմիական տրոհիչներ. քիմիական պատրաստուկներ լաբորատոր անալիզների համար, բացառությամբ բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողների. քլորատներ. քլոր. քլորհիդրատներ. քլորաջրածնային թթու. քլաթթու. քրոմատներ. քրոմային շիբ. քրոմի օքսիդ. քրոմի աղեր. քրոմական թթու. մածիկներ կաշվի համար. մածիկներ դողերի համար. ցեմենտ կոտրված առարկաները վերանորոգելու համար. պատրաստուկներ ցեմենտին անջրանցիկություն հաղորդելու համար, բացառությամբ ներկերի. պաշտպանիչ նյութեր ցեմենտի համար, բացառությամբ ներկերի և յուղերի. հեղուկներ հիդրավլիկական համակարգերի համար. մոմ ծառերը պատվաստելու համար. կիտրոնաթթու արդյունաբերական նպատակների համար. լուսարարներ գինու քաղցրացման համար. շոհ վերջնամշակման և նախաներկման համար. սոսինձներ պաստառների համար. լուսարարներ գինիների համար. կոլոդիում. աղեր մետաղների ներկման համար. փափկիչներ կաշվի համար, բացառությամբ յուղերի. նյութեր ծաղիկները թոշնելուց պաշտպանելու համար. կոնսերվանտներ դեղագործական արդյունաբերության համար. լուսաքիմիկատներ. զգայունացված գործվածք (պաստառ) լուսանկարչության համար. լուսաթիթեղներ. կոռոզիական (քայքայիչ) պատրաստուկներ. պատրաստուկներ կաշին մշակելու համար. պատրաստուկներ մորթիները մշակելու համար. թթու գինեթթվային կալիում (տարտրատ) քիմիական նպատակների համար. կրոտոնալդեհիդ. կրիոգենային պատրաստուկներ. սոսինձներ կաշվի համար. քիմիական նյութեր կաշվի մշակման համար. քիմիկատներ կաշվի տոգորման համար. պղնձարջասպ, պղնձի սուլֆատ (ծծմբաթթվային պղինձ). կյուրիում. լուծույթներ ցիանատպության համար. ցիանիդներ. ֆեռոցիանիդներ. ցիմոլ. արտադրական գործընթացներում օգտագործվող ճարպազրկող պատրաստուկներ. պատրաստուկներ սոսնձով կպցրածն անջատելու և պոկելու համար. քիմիկատներ յուղերն անջատելու և տարրալուծելու համար. սոսնձազերծող պատրաստուկներ. դեֆոլիանտներ (տերևաթափիչներ). կաղապարների յուղման հակահարակցային բաղադրություններ արտադրանքի հանումը հեշտացնելու համար. նյութեր փայլատման համար. ջրազրկող պատրաստուկներ արդյունաբերական նպատակների համար. պատրաստուկներ նստվածքը հեռացնելու համար. դետերգենտներ (լվացող նյութեր), որոնք օգտագործվում են արտադրության մեջ. դեքստրին

(ապրետ). արատորոշման պատրաստուկներ ոչ բժշկական կամ անասնաբուժական նպատակների համար. դիաստազներ արդյունաբերական նպատակների համար. երկազոթուղթ (երկազոտային լուսազգայուն թուղթ) պատճենման համար. պատրաստուկներ ձայնասկավառակները վերականգնելու համար. թորած ջուր. դոլոմիտ արդյունաբերական նպատակների համար. պատրաստուկներ մետաղների մխման համար. դիսպրոզիում. թթվեցրած ջուր կուտակիչները լիցքավորելու համար. գլիցերին արդյունաբերական նպատակների համար. ծանր ջուր. լուսարարներ. իոնափոխանակիչներ (քիմիական նյութեր). պատրաստուկներ լուսաբռնկիչների համար. պատրաստուկներ, որոնք ապահովում են վառելիքի խնայողական օգտագործումը. ռեակտիվ թուղթ, բացառությամբ բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողների. հակաստատիկներ, բացառությամբ կենցաղայինների. աղեր գալվանական տարրերի համար. պատրաստուկներ արծնի մթնեցման համար. պատրաստուկներ ապակու մթնեցման համար. քիմիկատներ ապակին և արծնը ներկելու համար. լուսաէմուլսիաներ. էմուլգարարներ. զգայունացված լուսաթիթեղներ. պատրաստուկներ շոհավորման համար. պարարտանյութեր. ֆերմենտային պատրաստուկներ արդյունաբերական նպատակների համար. ֆերմենտներ արդյունաբերական նպատակների համար. չմշակված էպօքսիդային խեժեր. նյութեր գազազտման համար. էրբիում. քացախաթթու. ինդիկատորային թուղթ (քիմիական). բարդ եթերներ. էթան. պարզ եթերներ. էթիլային եթեր. պարզ գլիկոլային եթեր. պարզ մեթիլային եթեր. ծծմբի եթեր. քիմիկատներ գործվածքի վրա հետքերի առաջացումը կանխելու համար. եվրոպիում. բաղադրություններ կրակմարիչների համար. ալյուր արդյունաբերական նպատակների համար. երկաթի աղեր. ֆերմենտներ քիմիական նպատակների համար. ֆեռոտպության լուսաթիթեղներ (լուսանկարչություն). պարարտանյութերի պատրաստուկներ. հրակայուն բաղադրություններ. բաղադրություններ պտուտակաձև պարուրակների ակոսահատման համար. զտող պատրաստուկներ ըմպելիքների արդյունաբերական արտադրության համար. տրոհվող նյութեր միջուկային էներգիա ստանալու համար. պատրաստուկներ սևեռակման համար (լուսանկարչություն). ծծմբաածաղիկ քիմիական նպատակների համար. նյութեր ֆլյուատապատման համար. ֆտոր. ֆտորի միացություններ. ֆտորաջրածնային թթու. գրաֆիտ արդյունաբերական նպատակների համար. կապակցող նյութեր ձուլման արտադրության համար. կաղապարման խառնուրդներ ձուլակաղապարների համար. քիմիական հավելանյութեր միջատասպան նյութերի համար. քիմիական հավելանյութեր ֆունգիցիդների համար. մրջնաթթու. ֆորմալդեհիդ (մրջնալդեհիդ) քիմիական նպատակների համար. պատրաստուկներ տեքստիլ արդյունաբերության մեջ լմելու ժամանակ օգտագործելու համար. լմման ժամանակ օգտագործվող պատրաստուկներ. ֆրանցիում. արգելակի հեղուկներ. լամպի մուր արդյունաբերական նպատակների համար. քիմիական պատրաստուկներ միսն ապխտելու համար. գադոլինիում. գիտորներ (դաբաղման). գիտորաթթու թանաքի արտադրության համար. գալիում. լուսանկարչական թուղթ. գիտորադաբաղային թթու, տանին. պատրաստուկներ ցինկապատման, գալվանապատման համար. գամբիր (դաբաղանյութ). պաշտպանական գազեր եռակցման համար. պնդացված գազեր արդյունաբերական նպատակների համար. ժելատին լուսանկարչության մեջ օգտագործելու համար. ժելատին արդյունաբերական նպատակների համար. քարաղ. գազակլանիչներ (քիմիապես ակտիվ նյութեր). չոր սառույց (ածխածնի երկօքսիդ). բուսական սոսինձներ միջատների դեմ պայքարելու համար. գլյուկոզաիդներ. գլիցերիդներ. գլիկոլներ. գունազերծիչներ ճարպերի համար. ճարպաթթուներ. մածիկ ծառերը պատվաստելու համար. գուանո (թռչնաղբ). գուրյուն-բալասան լաքի արդյունաբերության մեջ օգտագործելու համար. հելիում. հոլմիում. պտուղների աճն արագացնող հորմոններ. քիմիկատներ այգեգործության և բանջարաբուծության համար, բացառությամբ ֆունգիցիդների, հերբիցիդների, միջատասպանների և մակաբուծասպանների. յուղեր սննդամթերքի պահպանման համար. յուղեր արտադրման ընթացքում կաշվի մշակման համար. յուղեր կաշվի դաբաղման համար. դիսպերսարարներ նավթի համար. դիսպերսարարներ յուղերի համար. գունաթափող

պատրաստուկներ յուղերի համար. քիմիկատներ յուղերը մաքրելու համար. բուսահող. հիդրատներ. ածխաջրեր. հիդրազին. ջրածին. նատրիումի հիպոքլորիտ. հիպոսուլֆիտներ. քիմիկատներ գործվածքներին անջրանցիկություն հաղորդելու համար. քիմիկատներ գործվածքների տոգորման համար. քիմիկատներ կաշվին անջրանցիկություն հաղորդելու համար. յոդ քիմիական նպատակների համար. յոդի աղեր. յոդական թթու. յոդ արդյունաբերական նպատակների համար. իզոտոպներ արդյունաբերական նպատակների համար. ճենակավ (սպիտակ). կիզելգուր. կրիպտոն. կաթնաթթու. կաթնաֆերմենտներ քիմիական նպատակների համար. լանթան. պատրաստուկներ ոսպնյակների խամրումը կանխելու համար. լիթիումի օքսիդ. լիթիում. պաշտպանիչ նյութեր քարե շարվածքի համար, բացառությամբ ներկերի և յուղերի. պաշտպանիչ նյութեր աղյուսե շարվածքի համար, բացառությամբ ներկերի և յուղերի. մագնեզիտներ. մագնեզիումի քլորիդներ. մանգանատներ. մանգրենու կեղև արդյունաբերական նպատակների համար. քիմիկատներ ապակու փայլատման համար. սնդիկ. սնդիկի աղեր. սնդիկի օքսիդներ. մետաղակերպներ. ազնիվ մետաղների աղեր, արդյունաբերական նպատակների համար. պատրաստուկներ մետաղների շիկամշակման համար. մեթան. քիմիական պատրաստուկներ խաղողը չոռից (սնկային հիվանդություն) պաշտպանելու համար. հանքային թթուներ. աղեր արդյունաբերական նպատակների համար. խոնավացնող պատրաստուկներ ներկելիս օգտագործելու համար. նավթալին. նեոդիմ. նեոն. նեպտունիում. թունավոր գազերի չեզոքարարներ. քիմիական պատրաստուկներ հատիկաբույսերը մրիկից պաշտպանելու համար. ուրանի նիտրատ. զգայունացված թիթեղիկներ օֆսեթ տպագրության համար. օլեինային թթու. օլիվին (ձիթակն) (սիլիկատային միներալ). ոսկու աղեր. թրթնջկաթթվային կալիում. օքսալատներ. թրթնջկաթթու. թթվածին արդյունաբերական նպատակների համար. ջրածնի պերօքսիդ արդյունաբերական նպատակների համար. պալադիումի քլորիդներ. բորակով ներծծված թուղթ. լուսաչափական թուղթ. զգայունացված թուղթ. լակմուսաթուղթ. պեկտիններ լուսանկարչության մեջ օգտագործելու համար. նատրիումի պերբորատներ. պերկարբոնատներ. պերքլորատներ. պերսուլֆատներ. պերծծմբական թթու. կարբոլային թթու արդյունաբերական նպատակների համար. ֆոսֆատներ (պարարտանյութեր). խարամներ (պարարտանյութեր). ֆոսֆատիդներ. ֆոսֆոր. սուպերֆոսֆատներ (պարարտանյութեր). թուղթ լուսապատճենման համար. ֆոսֆորական թթու. գործվածք լուսապատճենների համար. լուսահայտաճիչներ. լուսազգայունարարներ. պիկրինային թթու. չմշակված պլաստմասսաներ. պլաստիզոլներ. կապարի ացետատ. կապարի օքսիդ. պլուտոնիում. պոլոնիում. կարտոֆիլի ալյուր արդյունաբերական նպատակների համար. տորֆահումուսային թաղարներ այգեգործության և բանջարաբուծության համար. պոտաշ. կալիում. ջրային պոտաշ. պրազեոդիմ. պրոմեթիում. պրոտակտինիում. չմշակված պրոտեիններ. պիրոգխտորաթթու. քվեբրախո արդյունաբերական նպատակների համար. չմշակված սինթետիկ խեժեր, չմշակված արհեստական խեժեր. ռադիոակտիվ տարրեր գիտական նպատակների համար. ռադոն. ռադիում գիտական նպատակների համար. սառնազդակներ. հացահատիկային բույսերի մշակման կողմնակի արգասիքներ արդյունաբերական նպատակների համար. չմշակված ակրիլային խեժեր. ռենիում. զգայունացված ռենտգենյան լուսակայված թաղանթներ. բաղադրություններ դողերը նորոգելու համար. ռուբիդիում. կաղապարման ավազ. սալիցիլային թթու. սելիտրա. սամարիում. մետաղական օճառներ արդյունաբերական նպատակների համար. սկանդիում. սեբացինային թթու. աղեր (քիմիական պատրաստուկներ). չմշակված աղեր (հումք). քրոմային աղեր. աղեր (պարարտանյութեր). սելեն. սերմերի պահպանմանը նպաստող նյութեր. սիլիկատներ. սիլիցիում. սիլիկոններ. նատրիում. սուլֆիտներ. քիմիկատներ զոդման համար, քիմիկատներ եռակցման համար. կալցինացված սոդա. կաուստիկներ արդյունաբերական նպատակների համար. կաուստիկ սոդա արդյունաբերական նպատակների համար. նատրիումի աղեր (քիմիական պատրաստուկներ). ծծումբ. ազոտաթթվային բիսմութ քիմիական նպատակների համար. բարիտներ. շպինելներ (օքսիդային հանքանյութ). ստեարինային թթու. ստրոնցիում. մուր արդյունաբերական կամ գյու-

ղատնտեսական նպատակների համար. հեղուկներ էլեկտրական կուտակիչները սուլֆատազրկելու համար. սուլֆաթթուներ. ծծմբային թթու. ծծմբական թթու. աղտոր դաբաղման ժամանակ օգտագործելու համար. քիմիկատներ անտառային տնտեսության համար, բացառությամբ ֆունգիցիդների, հերբիցիդների, միջատասպանների և մակաբուծասպանների. տալկ (մագնեզիումի սիլիկատ). աղաղակեղև. տանիններ. դաբաղիչ նյութեր. կալցիումի աղեր. դաբաղաթթու. տապիոկայի ալյուր արդյունաբերական նպատակների համար. գինեքար, բացառությամբ դեղագործական նպատակների համար օգտագործվողի. գինեթթու. տեխնեցիում. տելուր. մակերևութային ակտիվ նյութեր. տերբիում. քիմիկատներ ապակին ներկելու համար. պատրաստուկներ ապակու խամրումը կանխելու համար. քիմիկատներ պատուհանի ապակիների խամրումը կանխելու համար. հող բույսեր աճեցնելու համար. ֆուլերային հող տեքստիլ արդյունաբերության համար. հազվագյուտ հողեր. պարարտ կավահող. քառաքլորմեթան. քառաքլորիդներ. խոնավացնող պատրաստուկներ մանածագործության համար. թալիում. թիոկարբոնիլիդ. թուլիում. թորիում. տիտանի երկօքսիդ արդյունաբերական նպատակների համար. տիտանիտ. տոլուոլ. տորֆ (պարարտանյութ). պաշտպանիչ նյութեր կղմինդրի համար, բացառությամբ ներկերի և յուղերի. վոլֆրամական թթու. ուրան. ուրանի օքսիդ. հեղուկ ապակի (լուծվող). արդյունաբերական պատրաստուկներ միսը փափկացնելու համար. քիմիական պատրաստուկներ խաղողի հիվանդությունների կանխարգելման համար. գինու սպիրտ. երանգավորող աղեր (լուսանկարչություն). ռետինացնող (վուլկանացնող) պատրաստուկներ. վիթերիտ. քսենոն. իտերբիում. իտրիում. քլորիդներ. սուլֆատներ. ցիրկոնիումի երկօքսիդ. արդյունաբերական պատրաստուկներ սննդամթերքի պատրաստման գործընթացն արագացնելու համար. ամոնիակ (ցնդող ալկալի) արդյունաբերական նպատակների համար. ալկալիական յոդիդներ արդյունաբերական նպատակների համար. ալկալիական մետաղներ. ալկալիական մետաղների աղեր. ալկալոիդներ. ալգինատներ արդյունաբերական նպատակների համար. ալյումինի ացետատ. օսլայի շրեշ (սոսինձ) (բացառությամբ գրասենյակային կամ կենցաղային սոսնձի). ամոնիումի աղեր. կենդանական ածուխ. ազոտաթթվական արծաթ. գունաբացող քիմիկատներ արդյունաբերական նպատակների համար. բանջարանոցային կուլտուրաների սերմերի ծլմանը խոչընդոտող պատրաստուկներ. նիտրատներ. սոսինձներ երեսապատման սալիկների համար. բարիումի սուլֆատ. քիմիական նյութեր ներկեր պատրաստելու համար. մեթիլբենզոլ. մեթիլբենզեն. նատրիումի երկկարբոնատ քիմիական նպատակների համար. կենսաբանական պատրաստուկներ, ոչ բժշկական կամ անասնաբուժական նպատակների համար. գունաթափող պատրաստուկներ արդյունաբերական նպատակների համար. զգայունացված չլուսակայված լուսաժապավեններ. փայտասպիրտի թորման արգասիքներ. հալանյութեր կարծր զոդման համար. հալանյութեր զոդման համար. բրոմ քիմիական նպատակների համար. անթրացենային քլորացված յուղ բույսերի պաշտպանության համար. ֆլոկուլյանտներ. լեցիթին (հումք). սուբստրատներ (տակդիրներ) բույսերն առանց հողի աճեցնելու համար (գյուղատնտեսություն). ցելյուլոզների (թաղանթանյութերի) բարդ եթերներ արդյունաբերական նպատակների համար. կազեին արդյունաբերական նպատակների համար. ցելյուլոզների (թաղանթանյութերի) ածանցյալներ (քիմիական նյութեր). ցելյուլոզների (թաղանթանյութերի) պարզ եթերներ արդյունաբերական նպատակների համար. մանրէաբանական պատրաստուկներ ոչ բժշկական նպատակների համար. մանրէաբանական պատրաստուկներ ոչ բժշկական կամ անասնաբուժական նպատակների համար. կուլտուրաներ միկրոօրգանիզմներից, բացառությամբ բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողների. գազի մուր արդյունաբերական նպատակների համար. զգայունացված չլուսակայված կինոժապավեններ. կոբալտի օքսիդներ արդյունաբերական նպատակների համար. սոսինձներ արդյունաբերական նպատակների համար. յուղեր մշակված կաշվի մշակման համար. կրեոզոտ քիմիական նպատակների համար. բաղադրություններ ձայնասկավառակների արտադրության համար. նյութեր ճարպերն անջատելու և

տարրալուծելու համար. պլաստմասսաների դիսպերսում. լուծիչներ լաքերի համար. քաղցրացնող նյութեր, արհեստական արդյունաբերական նպատակների համար. քիմիկատներ ջրի մաքրման համար. փափկիչներ արդյունաբերական նպատակների համար. զտող նյութեր չմշակված պլաստմասսաներից. զտող նյութեր քիմիական նյութերից. զտող նյութեր անօրգանական նյութերից. զտող նյութեր բուսական նյութերից. գլյուկոզա արդյունաբերական նպատակների համար սոսնձանյութ (սոսինձ), բացառությամբ գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար օգտագործվողների. բնական սոսինձներ (սոսնձող նյութեր) արդյունաբերական նպատակների համար. պատրաստուկներ, որոնք աղյուսե կամ քարե շարվածքը պաշտպանում են խոնավությունից, բացառությամբ ներկերի. ձկան սոսինձ, բացառությամբ գրասենյակային, սննդային կամ կենցաղային նպատակների համար օգտագործվողների. կոնսերվանտներ գարեջրի համար. սինթետիկ նյութեր յուղերը կլանելու համար. խեցեգործական նյութեր մասնիկների տեսքով, որպես զտող միջոցներ օգտագործելու համար. կոմպոստ. բաղադրություններ տեխնիկական խեցեղենի արտադրության համար. դիատոմային հող. մետաղների խածանյութեր. պատրաստուկներ բույսերի աճը կարգավորելու համար. պատրաստուկներ նստվածքի (դիրտի) հեռացման համար, բացառությամբ կենցաղայինի. ծովի ջուր արդյունաբերական նպատակների համար. միկրոտարրերով հարստացված պատրաստուկներ բույսերի համար. քափուր արդյունաբերական նպատակների համար. քիմիական ուժեղարարներ թղթի համար. քիմիական ուժեղարարներ կաուչուկի (ռետինի) համար. բուսահող (հումուս) հողը պարարտացնելու համար. մագնիսական հեղուկ արդյունաբերական նպատակների համար. կառավարող սարքի ուժեղարարի հեղուկներ. փոխհաղորդակային հեղուկ. պատրաստուկներ շարժիչներում հեղուկների եռալն արգելակող բաղադրությունների համար. խեցեգործական հավելանյութեր, որոնք օգտագործվում են թրծման ժամանակ (հատիկավոր և փոշու տեսքով). սառնազդակներ տրանսպորտային միջոցների շարժիչների համար. քիմիկատներ ռադիատորները լվալու (մաքրելու) համար. մածկանման լցանյութեր ավտոմոբիլի թափքի վերանորոգման համար. ժելեր էլեկտրաֆորեզի համար. մածիկներ ապակիների համար. փքեցրած կավ հիդրոպոնիկական կուլտուրաների համար (հիմնանյութ). պատրաստուկներ պաստառները պոկելու համար. քիմիական հավելանյութեր յուղերի համար. յուղային մածիկներ (մածվածք). սերմերի գեներ գյուղատնտեսական արտադրության համար. ցողունային բջիջներ, բացառությամբ բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողների. կուլտուրաներ կենսաբանական հյուսվածքներից, բացառությամբ բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողների. պարարտանյութեր ձկան ալյուրից. ֆերմենտային պատրաստուկներ սննդի արդյունաբերության համար. ֆերմենտներ սննդի արդյունաբերության համար. գլյուկոզա սննդի արդյունաբերության համար. լեցիթին սննդի արդյունաբերության համար. լեցիթին արդյունաբերական նպատակների համար. պեկտին սննդարդյունաբերության համար. պեկտին արդյունաբերական նպատակների համար. գինեթթվային կալիում (տարտրատ) սննդի արդյունաբերության համար. գինեթթվային կալիում (տարտրատ) արդյունաբերական նպատակների համար. ալգինատներ սննդային արդյունաբերության համար. սնձան (գլյուտեն) սննդի արդյունաբերության համար. սնձան (գլյուտեն) արդյունաբերական նպատակների համար. կաթնաշաքար (լակտոզ) սննդարդյունաբերության համար. կաթնաշաքար (լակտոզ) արդյունաբերական նպատակների համար. կաթնաշաքար (լակտոզ) (հումք). կաթնաֆերմենտներ սննդի արդյունաբերության համար. կաթնաֆերմենտներ արդյունաբերական նպատակների համար. կազեին սննդարդյունաբերության համար. անուշադրի սպիրտ. քիմիական նյութեր պիգմենտներ պատրաստելու համար. պատրաստուկներ միկրոօրգանիզմներից, բացառությամբ բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողների. հողային խառնուրդներ թաղարային մշակաբույսերի համար. պատրաստուկներ մետաղների մխամեղմման համար. գլյուտամինի թթու արդյունաբերական նպատակների համար. թեյի մզվածքներ դեղագործական ապրանքների արտադրության համար. թեյի մզվածքներ

սննդարդյունաբերության համար. օրգանական թափուկներ (պարարտանյութ). թեյի մզվածքներ կոսմետիկայի արտադրության համար. կոլագեն (սոսնձանյութ) արդյունաբերական նպատակների համար. սիլիցիումի կարբիդ (չմշակված). օժանդակ միջոցներ ոչ բժշկական կամ անասնաբուժական նպատակների համար. վիտամիններ սննդային հավելույթների արտադրության համար. վիտամիններ սննդարդյունաբերության համար. հակաօքսիդանտներ արդյունաբերության մեջ օգտագործելու համար. հակաօքսիդանտներ կոսմետիկայի արտադրության համար. հակաօքսիդանտներ դեղագործական ապրանքների արտադրության համար. հակաօքսիդանտներ սննդային հավելույթների արտադրության համար. պրոտեիններ արդյունաբերության համար. պրոտեիններ սննդային հավելույթների արտադրության համար. պրոտեիններ սննդարդյունաբերության համար. ամոնիումի նիտրատ. վիտամիններ դեղագործական ապրանքների արտադրության համար. վիտամիններ կոսմետիկական արտադրության համար. ֆլավոնոիդներ արդյունաբերական նպատակների համար (ֆենոլային միացություններ). թիմոլ արդյունաբերական նպատակների համար. հողի հերկելի շերտ. փոխհաղորդիչ յուղեր. չմշակված պոլիմերային խեժեր. քիմիական պատվածքներ ակնաոսպնյակների համար. կալոմել (սնդիկի քլորիդ). գոմաղբ. քսիլոլ. քսիլեն. բենզոլ. չմշակված բենզոլ. գրաֆեն. գիպս որպես պարարտանյութ օգտագործելու համար. նանոփոշիներ արդյունաբերական նպատակների համար. դեղապատիճների արտադրության համար օգտագործվող դենդրիմերի հիմքով պոլիմերներ. քիմիական նյութեր հացահատիկային բույսերի հիվանդությունների կանխարգելման համար. կենսախթանիչներ բույսերի համար. չմշակված հաղորդիչ խեժեր. հաղորդիչ սոսինձներ. ալկալիական ջուր սննդի արդյունաբերության համար. խմորիչներ գիտական նպատակների համար. խմորիչներ կենսավառելիքի արտադրության համար. ջերմային մածուկ. կրծքի կաթի թեստավորման ախտորոշիչ շերտեր, բացառությամբ բժշկական կամ անասնաբուժական օգտագործման համար. բույսերի մզվածքներ սննդի արտադրության համար. բույսերի մզվածքներ կոսմետիկական միջոցների արտադրության համար. բույսերի մզվածքներ դեղագործական արտադրանքի արտադրության համար. քիմիական ակտիվ բաղադրիչներ. ածխածնի երկօքսիդ արդյունաբերական նպատակների համար. արհեստական քաղցրացնող նյութեր սննդի արդյունաբերության համար. սախարին սննդի արդյունաբերության համար. ասպարտամ արդյունաբերական նպատակների համար. ասպարտամ սննդի արդյունաբերության համար. դիէլեկտրիկ (մեկուսիչ) հեղուկներ որպես քիմիական պատրաստուկներ մետաղամշակման մեջ օգտագործելու համար, բացառությամբ յուղերի. կենդանական էքստրակտներ սննդի արդյունաբերության համար. սնուցիչ միջավայրեր մանրէների կուլտուրաների համար, բացի բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողներից. ախտորոշման պատրաստուկներ լաբորատոր հետազոտությունների համար. քիմիական ակտիվ բաղադրիչներ դեղագործական ապրանքների արտադրության համար. վիրուսներ, բացառությամբ բժշկական կամ անասնաբուժական նպատակներով օգտագործվողների կուտակիչների համար.

դաս 2. ներկեր. խածանյութեր. արծնուկներ. ներկանյութեր ըմպելիքների համար. սննդային ներկանյութեր (ներկանյութ). ալիզարինային ներկանյութեր. ալյումինային ներկեր. ալյումինի փոշի գեղարվեստա-դեկորատիվ նպատակների համար. ասբեստային ներկեր. հակակոռոզիական պատրաստուկներ. սևեռակող նյութեր (սևեռիչներ) ջրաներկերի համար. արծաթի մածուկ. արծաթի էմուլսիաներ (ներկանյութեր). փոշիներ արծաթապատման համար. ասֆալտի լաք, սև լաք. աուրամին. մանրէասպան ներկեր. սոսնձաներկեր. հակակոռոզիական ժապավեններ. կանադական բալզամ (բալասան). ներկանյութեր կարագի համար. ներկանյութեր գարեջրի համար. բիտումային լաքեր. պատվածքներ (ներկեր) փայտանյութի համար. խածանյութեր փայտանյութի համար. ներկանյութեր փայտանյութի կամ փայտի համար. սիենա (մուգ դեղին ներկանյութ). լաքեր բրոնզապատման համար. բրոնզափոշի ներկելու համար. ներկանյութեր կաշվի համար. կարամելներ (սննդային ներկանյութ). կարամելացված ածիկ (սննդային ներկանյութ). պատվածքներ (ներկեր) գուդրոնապատված

ստվարաթղթի համար. ներկեր խեցեգործական իրերի համար. կապարի շպար. գազի մուր (ներկանյութ). պաշտպանական նախաներկային պատվածքներ տրանսպորտային միջոցների շրջանակների (շասսիների) համար. ներկանյութեր կոշիկների համար. կրակաթ. տպագրական մածուկներ (թանաք). կոբալտի օքսիդ (ներկանյութ). որդան կարմիր. բևեկնախեժ. ներկանյութեր. ներկանյութեր ածիկից. միջոցներ փայտանյութը պաշտպանելու համար. կոպալ (բուսական խեժ). անիլինային ներկանյութեր. նոսրացուցիչներ ներկերի համար. նոսրացուցիչներ լաքերի համար. թանձրարարներ ներկերի համար. կրեոզոտ փայտանյութը պահպանելու համար. խածանյութեր կաշվի համար. ներկող նյութեր. գունանյութեր. քրքում (ներկանյութ). բնական անմշակ խեժեր. տեմպերա (ներկի տեսակ). արծներ (լաքեր). արծնաներկեր. տպագրական ներկեր. ներկեր կենդանիների խարանման համար. ներկերի սիկատիվներ (չորացման ուժեղարարներ). պատվածքներ (ներկեր). սևեռակող նյութեր (լաքեր). լամպի մուր (ներկանյութ). ֆուստին (ներկանյութ). ջնարակներ (պատվածքներ). դեղնախեժ նկարչության համար. շելլաք (գոճխեժ), կարմրախեժ. բուսախեժեր. թանձր հակակոռոզիական քսուքներ. թանաք փորագրության համար. ցինկի օքսիդներ (գունանյութեր). պաշտպանական յուղեր փայտանյութի համար. հակակոռոզիական յուղեր. հրակայուն ներկեր. ինդիգո (ներկանյութ). կապակցող նյութեր ներկերի համար. ներկանյութեր լիկյորների համար. կապարի գլյոտ (քարմարցանկ). մետաղական փոշիներ գեղարվեստա-դեկորատիվ նպատակների և տպագրության համար. մածիկներ (բնական խեժեր). մետաղական նրբաթիթեղ գեղարվեստա-դեկորատիվ նպատակների և տպագրության համար. բաղադրություններ մետաղների փայլազրկումը կանխելու համար. պաշտպանական պատրաստուկներ մետաղների համար. կապարի սուսր. թուղթ Զատիկի ձվերը ներկելու համար. աննատո (ներկանյութ). քրքում (զաֆրան) (ներկանյութ). սանդարակ (հոտավետ խեժ). մուր (ներկանյութ). աղտոր լաքերի համար. տիտանի երկօքսիդ (գունանյութ). բաղադրություններ ժանգի դեմ. նախաներկեր. ներկալուծույթներ սպիտակեցման համար. ներկանյութեր փայտանյութից. ներկիչ էքստրակտներ փայտանյութից. կարբոնիլ փայտանյութը պահպանելու համար. հանածո խեժի լաքեր. լաքեր. թանաք տպիչների և լուսապատճենահանող ապարատների համար. հակաբուսապատման ներկեր. լիցքավորված տոներային քարթրիջներ տպիչների և լուսապատճենահանող ապարատների համար. բևեկն (ներկերի նոսրացուցիչ). կարկատան-ներկեր փոխադրելի. ջրաներկեր նկարելու համար. յուղաներկեր նկարչության համար. սննդային թանաքներ. տպիչների քարթրիջներ լցված սննդային թանաքներով. նշիչների տեսքով գունանյութեր կահույքի վերականգնման համար. գրաֆիտիից պաշտպանելու պատվածքներ (ներկեր). ներկեր (երանգավորիչներ) տպիչների և լուսապատճենահանող ապարատների համար. լցված թանաքային քարթրիջներ տպիչների և լուսապատճենահանող ապարատների համար. փայտյա հատակների լաքեր. հակամիզային ներկ. հաղորդիչ ներկեր. հաղորդիչ թանաքներ. դաջվածքի թանաք. ներկող միջոցներ. փայլեր ներկի մեջ օգտագործելու համար. քողարկող հեղուկներ ջրաներկով նկարչության համար.

դաս 3. սոսինձներ դնովի մազերի ամրացման համար. հղկաքարեր. պատրաստուկներ գործիքներ սրելու համար. քարեր սափրվելու համար (կապող միջոցներ). նշի յուղ. նշի օճառ. համպար (պարֆյումերիա). փայլեցնող օսլա լվացքի համար. օսլա լվացքի համար. կարմիր կրոկուս ողորկման համար. օճառներ. գործվածքների երանգները վերականգնող օճառներ. լեղակ լվացքի սպիտակեղենի համար. էսենցիա (բնահյութ) բադիանից. կոսմետիկական պատրաստուկներ լոգանքի համար. օճառներ սափրվելու համար. շրթներկ. բամբակե տամպոններ կոսմետիկական նպատակների համար. կոսմետիկական դիմակներ. բերգամոտի յուղ. կավիճ սպիտակեցման համար. մաշկը սպիտակեցնող կոսմետիկական կրեմներ. պատրաստուկներ կաշվի գունաթափման համար. աղեր սպիտակեցման համար. սոդա սպիտակեցման համար. լվացքի սպիտակեցնող միջոցներ. սպիտակեղենին փայլ հաղորդելու միջոցներ. բուրավետ փայտանյութ. պատրաստուկներ բերանի խոռոչի ողողման համար, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. լաքեր եղունգների համար.

